

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ռուզաննա Բարիջանի Թաղևոսյան

**Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային
մրցունակության վրա (ՀՀ օրինակով)**

**Ը.00.06՝ «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թադևոսյան Ջոյա Աղվանի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դարբինյան Արմենակ Վաղարշակի

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ավագյան Միսակ Արմոյի

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ Միքայել Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024 թ. հուլիսի 18-ին, ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. հունիսի 18-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

S.S. Մարտիրոսյան

ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Միջազգային մրցունակության բարձրացման և ինովացիոն գործունեության ակտիվացման հիմնահարցերը մշտապես գտնվել են տնտեսագետների և քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում: Գլոբալացման խորացման և մրցակցության սրման ներկա պայմաններում նշված հիմնահարցերը առավել քան արդիական են ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Միջազգային մրցունակության բարձրացման նպատակով երկրներն իրենց տնտեսական քաղաքականությունը մշակում են այնպես, որ կարողանան անմիջականորեն ազդել միջազգային մրցունակության բարձրացմանն առնչվող գործոնների վրա: Նորաստեղծությունների դերի վերաբերյալ գոյություն ունի ընդունված համակարծիություն, ըստ որի այն դիտարկվում է որպես տնտեսության արդյունավետության բարձրացման շարժիչ ուժ: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրական բոլոր ակտերում օգտագործվում է հենց «ինովացիա» եզրույթը, այսուհետ «նորաստեղծություն» եզրույթի փոխարեն կօգտագործենք ինովացիան:

Ինովացիաների կարևորությունը գնահատելով՝ զարգացած երկրներն արդեն 60 տարուց ավելի է՝ ակտիվորեն ձևավորում և իրականացնում են ինովացիոն գործունեությանը նպաստող քաղաքականություն: ՀՀ-ում ինովացիոն քաղաքականությունն ունի շուրջ քսան տարվա պատմություն: Այդ քսան տարիների ընթացքում իրականացվել են համակարգաստեղծ բազմաթիվ նախաձեռնություններ, ստեղծվել են ինովացիոն գործունեությանը նպաստող մի շարք ենթակառուցվածքներ, որոնք թույլ են տվել ապահովել նաև որոշակի արդյունքներ: Նշված նախաձեռնությունների արդյունքում և տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտին գրեթե մեկ տասնամյակ առաջ տրված արտոնության շնորհիվ՝ գրանցվել է շոշափելի առաջընթաց:

Շատ հաճախ ինովացիան նույնացվում է տեխնոլոգիաների, առավելապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, սակայն ինովացիան ավելի լայն հասկացություն է և ընդգրկում է ոչ միայն SS-ն կամ S<S-ն, այլ նաև տնտեսության բոլոր ոլորտները: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տարիներ շարունակ գերակշռել է ինովացիայի տեխնոլոգիական ըմբռնումը, որի հետևանքով պետական քաղաքականությունն էլ մշակվել է գերազանցապես SS ոլորտի գործունեությանն աջակցելու նպատակով: Սակայն ոչ միայն SS բնագավառում, այլև տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում անգամ գյուղատնտեսության մեջ, ինովացիաների կիրառումը կարող է էականորեն բարձրացնել տնտեսության արդյունավետությունը՝ ի վերջո հանգեցնելով նաև միջազգային մրցունակության բարձրացմանը: Ելնելով վերոնշյալից՝ կարևորվում է ՀՀ-ում նոր ինովացիոն ռազմավարության մշակումն ու ընդունումը՝ այս անգամ շեշտադրելով ինովացիոն գործունեության խթանումը ոչ միայն SS-ում, այլև տնտեսության բոլոր ոլորտներում:

Ինովացիաների և միջազգային մրցունակության փոխառնչության գնահատումը, մակրոմակարդակում ինովացիոն գործունեության սահմանափակումների ախտորոշումը և ինովացիոն գործունեության խթանման նպատակով համապատասխան քաղաքականության արդյունավետության բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումն էլ պայմանավորել են սույն ատենախոսության արդիականությունը և հետազոտության հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիաների միջև փոխառնչության գնահատումն է և ՀՀ-ում ինովացիոն քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել միջազգային մրցունակության չափմանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները, ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը, գործիքակազմը և քաղաքականության իրացման մեխանիզմները,
- ուսումնասիրել ինովացիայի տարբեր տեսակների չափման տեսական մոտեցումները, ինչպես նաև քննական վերլուծության տեսանկյունից դիտարկել միկրո- և մակրոմակարդակներում նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- հետազոտել ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը՝ ուսումնասիրելով ինովացիոն գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտը և մինչ այժմ կիրառված մեխանիզմները,
- ուսումնասիրել ՀՀ ինովացիոն ենթակառուցվածքները, դրանց գործունեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները, մարդկային կապիտալի վիճակը և դրա զարգացման խորքային խնդիրները,
- վերլուծել ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականը և գնահատել դրանց ինովացիոն գործունեության ու ձեռնարկության չափի, ինչպես նաև գործունեության ոլորտի փոխառնչությունները,
- գնահատել ձեռնարկության ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական ուղղության փոխառնչությունները,
- գնահատել մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապը,
- համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ ինովացիոն ռեսուրսներն ու դրանց կենսագործման արդյունքները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիոն գործունեության փոխառնչությունն է: Հետազոտության առարկան ՀՀ միջազգային մրցունակության վրա ինովացիաների ազդեցության գնահատումն է:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեկնաբանման և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Վերջինս ներառում է ոչ պարամետրական թեստերի, կատեգորիկ փոփոխականների անկախության ստուգման թեստերի և պանելային ռեգրեսիոն մոդելի կիրառություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ՀՀ օրենքները, Կառավարության որոշումները, օրենսդրական այլ ակտեր, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի տարբեր հիմնադրամների, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված զեկոյցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- 126 երկրի կլաստերային վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է երկրների կրթական համակարգի արդյունավետության և ընդհանուր ինովացիոն կատարողականի միջև առկա դրական կապը: Վերլուծության արդյունքներով

Հայաստանը դասակարգվել է կրթության արդյունավետության և ինովացիոն կատարողականի միջին մակարդակ ունեցող երկրների շարքում:

- Միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մոդելով 67 երկրի պանելային տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն գնահատման արդյունքում բացահայտվել է արտոնագրային հայտերի թվի և արտահանման միջև առկա դրական կապը, սակայն ազդեցության թույլ ուժգնությամբ: Հիմնավորվել է արտոնագրերի աճի դրական ազդեցությունը արտահանման վրա:
- ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 1700 ձեռնարկությունների տվյալների հիման վրա ոչ պարամետրական Wilcoxon Rank Sum մեթոդով կատարված գնահատականներով հիմնավորվել է, որ կազմակերպության չափերը վերջինիս ինովացիոն գործունեությունը նշանակալիորեն սահմանափակող գործոն չեն:
- ANOVA մոդելի կիրառմամբ գնահատվել են ինովացիոն գործունեության ակտիվության տարբերությունները՝ ըստ Տնտեսական գործունեության դասակարգման (NACE խմբեր) տարբեր խմբերի և բացահայտվել ինովացիա կատարելու տեսանկյունից գործունեության ոլորտի նշանակալի լինելը:
- ՀՀ ձեռնարկությունների միկրոտվյալների հիման վրա, Chi-Square թեստի կիրառմամբ, գնահատվել են նրանց արտահանման շուկաների և ինովացիոն գործունեության փոխառնչությունները: Բացահայտվել է, որ ԵՄ և ասոցացված երկրների շուկաների վրա կողմնորոշված ՀՀ ձեռնարկություններն ավելի հաճախ են ինովացիաներ կատարում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ինովացիոն քաղաքականության մշակման և իրականացման, հետազոտությունների և մշակումների խթանման քաղաքականության իրականացման գործընթացում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարության կողմից: Ատենախոսության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինովացիաներով և միջազգային մրցունակությամբ զբաղվող մասնագետների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստի ընթացքում, «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորարարության, գիտելիքահենք տնտեսության վարչության քաղաքականության մշակման բաժնում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 5 հոդվածում, որոնցից 3-ն ինդեքսավորված են միջազգային գիտաշահական Web of Science և Scopus շտեմարաններում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 144 էջից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված հիմնական արդյունքները և նորոյթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, ներկայացվել են հետազոտության շրջանակներում իրականացված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Միջազգային մրցունակություն, ինովացիա և ինովացիոն քաղաքականության. տեսագործնական գնահատականներ» գլխում իրականացվել է միջազգային մրցունակության տարբեր բնորոշումների, դրա վերաբերյալ տեսական և էմպիրիկ աշխատությունների, ինովացիայի և ինովացիոն գործունեության բնորոշումների, Էվոլյուցիոն ընդլայնման, միջազգային մրցունակության և ինովացիաների չափման, ինչպես նաև ինովացիոն քաղաքականության միջազգային փորձի և դրա իրացման մեխանիզմների ուսումնասիրություն:

Միջազգային մրցունակության ոչ միանշանակ ընկալման և համընդհանուր ընդունելի չափման գործիքակազմի բացակայության պայմաններում, այն չափելու հնարավորինս ընդունելի մոտեցման մշակման նպատակով, տարբեր բնորոշումների, մի շարք հեղինակների կողմից առաջադրված սահմանումների, տեսական և էմպիրիկ աշխատությունների, հետազոտությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ երկրի մրցունակությունն արտացոլվում է միջազգային շուկաների պահանջներին համապատասխան ապրանքներ և ծառայություններ արտադրելու և դրա շնորհիվ երկրի բնակչության բարեկեցության շարունակական աճն ապահովող եկամուտներ ստանալու կարողությամբ: Ուստի որպես միջազգային մրցունակության չափման լավագույն մոտարկում հիմնավորվել է արտահանման օգտագործումը:

Իրականացնելով «ինովացիա» ֆենոմենի հանգամանալից ուսումնասիրություն, արձանագրվել է, որ այն, որպես տնտեսական աճի շարժիչ ուժ, ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխությունների՝ ներառելով ոչ միայն նոր տեխնոլոգիաները, այլև ոչ տեխնոլոգիական ոլորտները: Համաձայն SՀԶԿ-ի կողմից հրապարակվող, միջազգայնորեն ընդունելի Օսլոյի վերջին ուղեցույցի, ինովացիան նոր կամ կատարելագործված արտադրանքը կամ գործընթացն (կամ դրանց համադրությունը) է, որն էականորեն տարբերվում է տվյալ միավորի նախկին արտադրանքներից կամ գործընթացներից, և որը հասանելի է դրա հավանական օգտագործողներին (արտադրանքի ինովացիայի դեպքում) կամ կիրառվում է տվյալ միավորի կողմից (գործընթացի ինովացիա): Այսպիսով՝ այն տարածվում է տնտեսության բոլոր ոլորտների կազմակերպությունների վրա և միկրոմակարդակում չափելու հնարավորություն է տալիս: Երկրների ինովացիոն գործունեությունը գնահատելու համար առավելապես օգտագործվում է գլոբալ ինովացիոն համաթիվը (ԳԻՀ), մինչդեռ մակրոմակարդակի էմպիրիկ մոդելներում, որպես ինովացիայի մոտարկում, օգտագործվում են արտոնագրային հայտերի թիվը կամ հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) վրա կատարվող ծախսերը: Մասնագիտական գրականության ուսումնասիրության և տվյալների վերլուծության արդյունքում հիմնավորվել է մակրոմակարդակի մոդելում արտոնագրային հայտերի թվի՝ որպես ինովացիայի մոտարկում օգտագործելը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման օրենսդրական և գործնական հիմքերը» գլխում քննարկվել են ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը, ինովացիոն ենթակառուցվածքները և մարդկային կապիտալը: Առանձնացվել և վերլուծվել են 2005–2022 թթ. ընդունված՝ ինովացիոն գործունեությանն առնչվող բոլոր իրավական ակտերը, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ

բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ ձեռնարկությունների ինովացիոն գործունեության խթանմանն ուղղված ծրագրերը:

Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը վերանայման, լրացման և հստակեցման կարիք ունի: Մասնավորապես՝ հստակ չէ, թե ո՞րն է համարվում կատարելագործված ապրանք կամ կատարելագործված տեխնոլոգիա: Օրենքում չկա նաև որևէ դրույթ կրթության, գիտության, հետազոտական աշխատանքների և արտադրության միջև կապի ստեղծման վերաբերյալ: Օրենքում թեև նշված են աջակցության ուղղությունները, սակայն հստակեցված չեն դրանց ձևերը, և չկան սահմանված թիրախներ:

Անդրադառնալով ՀՀ ինովացիոն ենթակառուցվածքներին՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ-ում առկա են ինովացիոն համակարգին աջակցող գրեթե բոլոր տարրերը, սակայն ֆինանսավորման առումով առավել մեծ է վենչուրային կապիտալի ազդեցությունը: Թե՛ ՀՀ-ում, թե՛ ամբողջ աշխարհում ստարտափների, վենչուրային հիմնադրամների և վենչուրային գործարքների թիվը տարեցտարի աճում է: Թեև ըստ Վենչուրային կապիտալի և բաժնեմասնակցության համաթվի՝ 2021 թ-ին, նախորդ տարիների համեմատությամբ, Հայաստանի դիրքը որոշ չափով վատթարացել է, սակայն ՀՀ-ում վենչուրային հիմնադրամների ստեղծման առումով առավել աշխուժացում նկատվել է հենց 2021-2022 թթ.: Պատճառներից մեկն այն է, որ 2021 թ. համաթվի հաշվարկման համար օգտագործվել են դրան նախորդող տարիների ցուցանիշները: Իսկ աշխուժացումը պայմանավորված է եղել ընդհանուր ստարտափ էկոհամակարգի զարգացմամբ, այսինքն՝ վենչուրային ֆոնդերը ստեղծվել են՝ արձագանքելով ստարտափների քանակական և որակական աճին: Վենչուրային ֆոնդերի հիմնադիրների շրջանում մեր կողմից անցկացվել են հարցումներ, որոնց արդյունքները փաստում են, որ ՀՀ-ում միջավայրը շատ բարենպաստ է օրենսդրական կարգավորումների առումով, վարչարարությունը հեշտ է (ԿԲ-ին՝ վերահսկող մարմնին, ընդամենը երեք հաշվետվություն է ներկայացվում ֆոնդի ընդհանուր ցուցանիշների վերաբերյալ), ֆոնդի բացելը տևում է մի քանի շաբաթ, բացման և գործունեության հետ կապված վարչական ծախսեր գրեթե չկան, և, եթե համեմատենք այլ երկրների հետ, դրանք անհամեմատ ավելի փոքր են: Սակայն այս ամենին զուգընթաց, ֆոնդերի հիմնադիրները նշում են նաև մեկ բացասական գործոնի մասին. այն է՝ օրենսդրության համաձայն («Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, 3-րդ կետ)՝ ոչ հրապարակային ֆոնդերը սահմանափակ թվով՝ 49 մասնակից կարող են ունենալ, ինչն էականորեն խոչընդոտում է ֆոնդերի մեծացմանը՝ թույլ չտալով ավելի շատ մարդկանց ներգրավել, որն էլ ստիպում է մեծացնել մուտքավճարը:

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, օրենսդրության և հարկային արտոնությունների առումով առկա է բարենպաստ միջավայր, մինչդեռ օրենքների կիրարկման, կապիտալի շուկայի ընդլայնման և մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ դեռևս անելիքները շատ են: Հետևապես՝ պետության գործառույթն առավելապես պետք է լինի նշված ցուցանիշների լավարկումը, ընդհանուր ենթակառուցվածքների ստեղծումը և ոլորտի համար մրցակցային միջավայրի ապահովումը: Հեղինակի կարծիքով՝ նման պայմաններում շուկայական մեխանիզմները կհանգեցնեն անհրաժեշտ ծավալով ու թվով ֆոնդերի ստեղծմանը՝ առանց նույնիսկ ֆոնդերում պետության ուղղակի ներդրումային մասնակցության:

Ուսումնասիրելով ինովացիոն գործունեության տեսանկյունից առանցքային նշանակություն ունեցող մարդկային կապիտալի համաթիվը (ՄԿՀ)՝ պարզվել է, որ ՀՀ մարդկային կապիտալի ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է կրթության ցուցանիշների ցածր մակարդակով, մասնավորապես՝ ներդաշնակեցված թեստերի բավականին ցածր

միավորով: ՄԿՀ-ում կրթությունը բնութագրող մեկ այլ ցուցանիշ է սպասվող ուսումնառության տարիների թիվը: Հատկանշական է սակայն, որ ոչ միայն կարևոր է՝ որքան է ուսումնառության տարիների թիվը, այլև թե ինչ են սովորել այդ ընթացքում, այսինքն՝ որակով ճշգրտված ուսումնառության տարիների թիվը: Վերջինս հաշվարկվում է՝ ուսումնառության սպասվող տարիների թիվը բազմապատկելով TIMSS-ի վերջին ստուգատեսի միավորների և TIMSS-ի առավելագույն միավորի հարաբերակցությամբ (օրինակ՝ «Հ դեպքում՝ 11,3×443/625): Այսպես՝ թեև ՀՀ-ում այսօր ծնված երեխան կարող է ակնկալել, որ կստանա 11.3 տարի կրթություն, սակայն, հաշվի առնելով իր ստացած գիտելիքները, դա հավասար կլինի ընդամենը 8 տարվա տարբերությունը 3.3 տարի է: Այսինքն՝ աշակերտը 3.3 տարով ավելի է դպրոց հաճախում, բայց, ի վերջո, ստանում է 8 տարվա ժամանակահատվածին համարժեք գիտելիք: Սա, թերևս, ՀՀ կրթական համակարգի իրական գնահատականն է: Կարծում ենք՝ այդ տարբերությունը, երկրների կրթական համակարգի արդյունավետությունը համեմատելու առումով, ավելի լավ ցուցանիշ է, քան նույնիսկ ՄԿՀ հիմքում առկա որակով ճշգրտված տարիների թիվը: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ ներդաշնակեցված թեստի միևնույն միավորի դեպքում սպասվող ուսումնառության տարիների ավելի մեծ թիվը մեծացնում է նաև որակով ճշգրտված տարիների թիվը: Բայց եթե աշակերտները կարողացել են ավելի բարձր միավոր ստանալ՝ ավելի քիչ տարիների դեպքում, նշանակում է՝ կա՛մ այդ կրթական համակարգն է ավելի արդյունավետ, կա՛մ տվյալ երկրի աշակերտների մտավոր կարողությունների մակարդակն է ավելի բարձր: Կարևորելով կրթական համակարգի արդյունավետության գնահատման գործում վերոնշյալ ցուցանիշի նշանակությունը և հաշվի առնելով, որ մարդկային կապիտալը ինովացիոն գործունեության շարժիչ ուժն է, իսկ այն «կերտող» կրթական համակարգը նշված կապիտալը վերարտադրող՝ իրականացրել ենք կլաստերային վերլուծություն՝ ուսումնառության սպասվող և որակով ճշգրտված տարիների թվի տարբերության և Գլոբալ ինովացիոն համաթվի ցուցանիշի հիման վրա: Այդ նպատակով, վերլուծությունում ներառվել է զարգացման տարբեր մակարդակ ունեցող 126 երկիր: Աղյուսակ 1-ում ներկայացված են կլաստերներից յուրաքանչյուրում արձանագրված միջին արժեքները: Ակնհայտ է, որ թե՛ կրթության արդյունավետության, թե՛ ԳԻՀ-ի միավորներով լավագույն արդյունքները տեղ են գտել 1-ին կլաստերում, որը պայմանականորեն անվանել ենք առաջատար: Այդտեղ ընդգրկված է ընդամենը 30 երկիր, որոնց միջին գնահատականները կարելի է համարել թիրախային մյուս կլաստերների համար:

Աղյուսակ 1. Կլաստերների նկարագիրը՝

Ցուցանիշներ	Կլաստերներ		
	1	2	3
Ուսումնառության սպասվող և որակով ճշգրտված տարիների տարբերություն	2.38	3.51	3.8
Գլոբալ ինովացիոն ցուցչի միավոր	52.9	35.5	23.4

Երկրորդ կլաստերի երկրներն ապահովել են միջին արդյունք, ուստի դրանք անվանել ենք *նախաձեռնող երկրներ*: Նշված երկրների խմբում տեղ է գտել 40 երկիր, այդ թվում նաև Հայաստանը: Երրորդ կլաստերում ներառվել է առավել մեծ թվով՝ 55 երկիր, որոնք ունեն կրթության և ինովացիոն կատարողականի ցածր որակ և աստիճան: Դրանք պայմանականորեն անվանվել են *հետնապահ երկրներ*: Վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ այն երկրներում, որտեղ կրթական համակարգի արդյունավետությունը բարձր է, այսինքն՝

¹ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

ուսումնառության սպասվող և որակով ճշգրտված տարիների թվի տարբերությունը փոքր է, ԳԻՀ-ի միավորը ևս բարձր է: Այսինքն՝ կրթական համակարգի արդյունավետության և երկրի ինտելեկտի կատարողականի միջև փոխառնչությունն անվիճելի է:

Կրթության որակի վրա ազդող գործոնները պարզելու նպատակով հեղինակի կողմից կատարվել են փորձագիտական հարցումներ: Ըստ փորձագետների ընդհանրական գնահատականների՝ կրթության վրա ազդում են հետևյալ հիմնական գործոնները. ուսուցիչների մոտիվացիան, աշակերտների մոտիվացիան և առարկայական ծրագրերը: Այսպես՝ ի տարբերություն այլ ծառայությունների, որտեղ որակը բացառապես կախված է ծառայություն մատուցողից, կրթության պարագայում այն էապես կախված է նաև ծառայությունը ստացողից, տվյալ դեպքում՝ աշակերտից: Հետևաբար՝ այն գործոնները, որոնք հանգեցրել են ցածրորակ կրթության, պայմանավորված են ոչ միայն առարկայական ծրագրերի որակով, այլև ուսուցիչների և աշակերտների մոտիվացիայով: Առարկայական ծրագրերի հետ կապված՝ պետք է նշել, որ ՀՀ բոլոր հանրակրթական հաստատություններում ներդրվում են նոր առարկայական ծրագրեր՝ նոր չափորոշիչներով: Սակայն նոր չափորոշիչների ազդեցության և արդյունավետության վերաբերյալ գնահատականներ հնարավոր է տալ միայն որոշակի ժամանակ անց՝ այդ չափորոշիչներով սովորած և ավարտած շրջանավարտների առնվազն մեկ սերունդ թողարկելուց հետո միայն: Ինչ վերաբերում է մյուս գործոնին՝ աշակերտների մոտիվացիային, ապա պետք է նշել, որ, ուսումնասիրություններից մեկի համաձայն, աշակերտների մեծամասնության լավ սովորելու մոտիվացիայի վրա ազդում է ուսուցչի լավ վերաբերմունքը, հետագայում լավ աշխատանք ունենալու ակնկալիքը, դասերի հետաքրքիր անցկացումը, որոշակի առարկայի և կյանքում դրա կիրառելիության կապը տեսնելը, ծնողների գովասանքը և իրենցով հպարտանալը: Միևնույն ժամանակ, գերազանց սովորողներն առավել պակաս զգայուն են ուսուցչի լավ վերաբերմունքի հանդեպ, մինչդեռ լավ և բավարար գնահատական ստացողների մեծամասնության համար առաջնայինը ուսուցչի լավ վերաբերմունքն է²:

Որակյալ կրթություն ապահովելու մեկ այլ կարևորագույն գործոն է որակյալ և մոտիվացված ուսուցիչներ ունենալը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ուսուցչի մոտիվացիան դրականորեն է ազդում աշակերտի առաջադիմության վրա: Իսկ ուսուցչի մոտիվացիայի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են եկամուտը, առաջխաղացման համակարգի ընկալվող արդարությունը, աշխատանքային պայմանների որակը, սոցիալական հարաբերությունները, առաջնորդությունը և հենց աշխատանքը: Աշխատավարձն ուսուցիչներին մոտիվացնող բազմաթիվ գործոններից մեկն է միայն, սակայն լավագույն թեկնածուներին ներգրավելու և լավագույն ուսուցիչներին համակարգում պահելու տեսանկյունից դա ամենաէական գործոնն է: Ուսուցչի աշխատավարձը խիստ փոխկապված է աշակերտների ցուցաբերած արդյունքների հետ: Մասնավորապես՝ 39 երկիր ընդգրկող հետազոտության համաձայն, ուսուցիչների աշխատավարձի 15%-ով բարձրացումը նպաստում է աշակերտների ցուցաբերած արդյունքի 6–8%-ով բարձրացման³: Մինչդեռ մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ուսուցչի աշխատավարձը բավականին ցածր է, այսպես՝ պետական հատվածում ըստ ինստիտուցիոնալ հատվածների և տնտեսական գործունեության տեսակների դիտարկելիս թե՛ կրթության ոլորտի աշխատավարձը՝

² Tadevosyan, R. (2022). Study of the Factors Affecting the Motivation of Pupils by the Example of the Ararat Region of the RA, AMBERD Bulletin 6(19), pp. 81-93. <https://asue.am/upload/files/amberd/2022-year-6/10.pdf>

³ EFA Global Monitoring Report 2013-2014 (2014). Teaching and learning: achieving quality for all, <https://rb.gy/1e1jae>

ընդհանրապես, թե՛ ուսուցչի աշխատավարձը՝ մասնավորապես, ամենացածրն է՝ ՏԳՏԴ Ա (Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն) խմբից հետո: Ընդ որում, պետական հատվածում կրթություն/պետական հատվածի միջին աշխատավարձ հարաբերակցությունը 0.75% է, այն դեպքում, երբ ոչ պետական հատվածում այդ հարաբերակցությունն ավելի բարձր է՝ 0,86%:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ երկրներում է ուսուցչի աշխատավարձը ցածր՝ նվազագույն աշխատավարձի համեմատությամբ նույնիսկ համադրելի է ՀՀ-ի հետ (Լեհաստան, Սլովակիա, Ֆրանսիա, Հունաստան), սակայն նվազագույն սպառողական զամբյուղի համեմատությամբ Հայաստանում ուսուցչի աշխատավարձն անհամեմատ ցածր է (1.13): Այլ հավասար պայմաններում շատերը գուցե համաձայնեն հետամուտ լինելու իրենց նախընտրելի մասնագիտությանը՝ թեկուզև այլ ոլորտների համեմատությամբ քիչ աշխատավարձ ստանալով, սակայն երբ արժանավայել կյանքի անհրաժեշտ նվազագույնը չի ապահովվում, ապա այս դեպքում համակարգ մուտք գործողների անհրաժեշտ և որակյալ թիվը ևս չի ապահովվում: Իսկ որպեսզի համակարգ մուտք գործեն բարձր կարողություններով օժտվածները, պետք է նախ՝ բազային աշխատավարձը բարձրացվի, այնուհետև՝ կիրառվեն աշխատանքային փորձով և ատեստավորման արդյունքներով պայմանավորված հավելումները: Մեր կողմից կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ եթե, օրինակ, 2024 թ. կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունն ավելացվի 0.3 տոկոսային կետով՝ հասցնելով 3.04%-ի, ապա դա թույլ կտա ուսուցիչների բազային աշխատավարձը բարձրացնել 50%-ով, եթե ավելացվի 0.4 տոկոսային կետով, ապա դա հնարավորություն կտա ուսուցիչների բազային աշխատավարձն ավելացնելու 70%-ով: Ընդամենը 0.5 տոկոսային կետով կրթության ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունն ավելացնելու և 3.15%-ի հասցնելու դեպքում ուսուցչի բազային աշխատավարձը հնարավոր է բարձրացնել 2 անգամ: Կարևոր է ընդգծել, որ մարդկային կապիտալի «պաշարը» բարելավելու հստակ ուղիներից մեկը դպրոցական կրթության որակի բարձրացումն է, իսկ դրա համար առաջնահերթ է ավելի բարձր որակավորմամբ ուսուցիչների շրջանում ներդրումներ կատարելը: Հետևաբար՝ շոշափելի առաջընթաց ապահովելու տեսանկյունից նյութական խթանների դերը չի կարելի անտեսել, երբ ուսուցչի բազային աշխատավարձի բարձրացումը տեղափոխվում է առաջնային պլան:


Ատենախոսության երրորդ՝ «**ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ վերլուծություն (ՀՀ օրինակով)**» գլխում իրականացվել է ՀՀ ինովացիոն ռեսուրսների և արդյունքների համապարփակ վերլուծություն, մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ վերլուծություն, ինչպես նաև ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականի վերլուծություն, որոնց արդյունքում ախտորոշվել են ՀՀ-ում ինովացիոն գործունեության խոչընդոտները, ուրվագծվել են ՀՀ ինովացիոն քաղաքականության առաջնահերթությունները:

2007–2013 թթ. ինովացիոն ռեսուրսների և արդյունքների համապարփակ վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ երկարաժամկետում ինովացիոն գործունեության խոչընդոտների շարքում էական է աշխարհի միջին ցուցանիշը 1.5 անգամ զիջող կրթության պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը, 8–9 անգամ զիջող համախառն ՀուՄ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը, հետոյաբողական կրթության ընդհանուր շրջանավարտների մեջ գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի գծով շրջանավարտների ընդամենը 17.7% տեսակարար կշիռը, ինչպես նաև մեկ միլիոն բնակչի հաշվով հետազոտողների փոքր թիվը (1333): Վերջինիս հետ կապված՝ կարևոր է ընդգծել, որ 1981 թ. այդ նույն ցուցանիշը Հայաստանում 6400 էր և ԽՍՀՄ երկրներից միայն Ռուսաստանին էր զիջում. համեմատության համար նշենք, որ 2019 թ. ՏՀԶԿ միջինը կազմել

է 4050⁴: Հայաստանում հետազոտողի աշխատանքը գրավիչ չէ՝ հաշվի առնելով աշխատանքի բարդությունը և դրան ոչ համարժեք ցածր աշխատավարձը, որի այլընտրանքները շատ ավելի պակաս կրթությամբ ու աշխատանքի բարդությամբ հնարավոր է գտնել նույնիսկ ՀՀ աշխատաշուկայում: Խնդրահարույց են նաև ՀուՄ ոլորտում համալսարաններ-արդյունաբերություն համագործակցությունը և կլաստերների զարգացվածության վիճակը բնութագրող ցուցանիշները: Մեկ այլ խնդիր է մասնավոր ՀուՄ ծախսերի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, թեև աշխարհում և հատկապես զարգացած երկրներում մասնավոր ՀուՄ ծախսերի կշիռն ավելի բարձր է պետական ծախսերի համեմատությամբ:

Մինչույն ժամանակ, Հայաստանը համեմատաբար տպավորիչ արդյունքներ է գրանցում ըստ ծագման երկրի օգտակար մոդելների թվով (Գնողունակության պարիտետով ճշգրտված 1 մլրդ դոլար ՀՆԱ հաշվով), որով զբաղեցրել է 16-րդ հորիզոնականը 132 երկրների շարքում: Մինչդեռ ըստ ծագման երկրի արտոնագրերի թվով Հայաստանը վերջին 2-3 տարիներին միայն հետընթաց է գրանցում՝ 2020 թ. 29-րդ հորիզոնականից 2023 թ. հայտնվելով 59-րդ հորիզոնականում: Ամբողջ աշխարհում 2009 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո արտոնագրերի թվի նվազում գրանցվել է միայն 2019 թ., մինչդեռ Հայաստանում այդ տարի արտոնագրերի թիվն աճել է, սակայն հաջորդ տարիներին շարունակաբար կրճատվել է՝ այն էլ մեծ տեմպերով (գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Արտոնագրային հայտերի թիվը՝ գրանցված ՀՀ-ում և ԱՄՆ-ում ՀՀ ռեզիդենտների կողմից, 2009-2022⁵



Բացի ՀՀ-ում գրանցված արտոնագրային հայտերի թվից՝ նպատակային ենք համարել դիտարկել նաև ՀՀ ռեզիդենտների կողմից ԱՄՆ-ում գրանցած արտոնագրային հայտերի թիվը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱՄՆ-ում մտավոր սեփականության պաշտպանության գործընթացը ներդրողների կողմից մեծ վստահություն է վայելում: Այսպես՝ թեև ՀՀ-ում արտոնագրային հայտերի թիվը 2009 թ. համեմատությամբ, ընդհանուր առմամբ, նվազման միտում է ցուցաբերում, սակայն ԱՄՆ-ում ՀՀ ռեզիդենտների արտոնագրային հայտերի թիվը ցուցաբերում է աճի միտում: Համեմատության համար նշենք, որ եթե 2011 թ.

⁴ FAST Foundation 3 Years report 2017-2020 . Enroute to Innovative Armenia, https://fast.foundation/assets/FAST_Impact%20assessment_online%20version.pdf
⁵ Կազմվել է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության և ԱՄՆ արտոնագրերի և առևտրային նշանների գրասենյակի տվյալների հիման վրա. WIPO data, <https://www3.wipo.int/ipstats/ips-search/patent>, USPTO data <https://www.uspto.gov/about-us/performance-and-planning/uspto-annual-reports>

ԱՄՆ-ում ՀՀ ռեզիդենտների արտոնագրային հայտերի թիվն ընդամենը 8-ն էր, այս 2021 թ.՝ 54-ը, այսինքն՝ 10 տարում ցուցանիշն աճել է շուրջ 7 անգամ: Ընդ որում, 2021 թ. առաջին անգամ ՀՀ ռեզիդենտների կողմից ԱՄՆ-ում գրանցված արտոնագրային հայտերի թիվը գերազանցել է ՀՀ-ում գրանցված արտոնագրերի թիվը, այն էլ՝ 35%-ով: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս ֆենոմենը բնորոշ է նաև մի շարք եվրոպական երկրների, մասնավորապես՝ 2021 թ. Արևմտյան, Կենտրոնական և Հյուսիսային եվրոպայի որոշ երկրներ, ինչպիսիք են Իսպանիան, Ավստրիան, Բելգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը, Դանիան, Շվեդիան, Ֆինլանդիան, Լիտվան և Էստոնիան երկու անգամ ավելի շատ արտոնագրեր գրանցել են ԱՄՆ-ում, քան սեփական երկրում:

Մի կողմից՝ ողջունելի է ՀՀ ռեզիդենտների՝ ԱՄՆ-ում գրանցած արտոնագրային հայտերի թվի աճը, մյուս կողմից՝ որոշակի մտահոգությունների տեղիք է տալիս 2019 թ-ից հետո ՀՀ ռեզիդենտների կողմից Հայաստանում և ԱՄՆ-ում գրանցված ընդհանուր արտոնագրային հայտերի թվի նվազման միտումը: Կարևոր է ընդգծել, որ ՀՀ անկախությունից ի վեր արտոնագրման գործունեության հետ կապված մի շարք օրենսդրական փոփոխություններ են կատարվել, և, 2022 թ. նոր օրենքի ընդունմամբ պայմանավորված, հնարավոր է՝ ցուցանիշն ավելի նվազի՝ հաշվի առնելով գործընթացի որոշ փոփոխություններ:

Օգտագործելով մեկ միլիոն բնակչի հաշվով արտոնագրերի թիվը որպես մակրոմակարդակում ինովացիայի մոտարկում և մեկ միլիոն բնակչի հաշվով արտահանման ցուցանիշը որպես միջազգային մրցունակության մոտարկում, պանելային ավտոռեգրեսիոն մոդելի կառուցմամբ գնահատվել է ինովացիայի ազդեցությունը միջազգային մրցունակության վրա: Ընդ որում, մոդելում ներառվել են բոլոր այն երկրները, որոնք վերաբերյալ 1993–2020 թվականների (27 տարի) բոլոր ցուցանիշերի համար առկա են բոլոր տվյալները, կամ կա առավելագույնը 3 բացակայող տվյալ յուրաքանչյուր ցուցանիշի գծով: Նշյալ հատկանիշները բավարարող երկրների թիվը 67 է (Հայաստանը ևս ներառված է), որոնք և ընդգրկվել են մոդելում (աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Մակրոմակարդակում միջազգային մրցունակության վրա ազդող գործոնների գնահատումը⁶

Կախյալ փոփոխական: Log (Մեկ մլն բնակչի հաշվով արտահանում)	
Բացատրող փոփոխականներ	Գործակից
Log(Մեկ մլն բնակչի հաշվով արտոնագրային հայտերի թիվ)	0.009**
Իրական արդյունավետ փոխարժեք	-0.0006**
ՕՈՒՆ/ՀՆԱ, %	0.004***
Log(մեկ մլն բնակչի հաշվով արտահանում) t-1 ժամանակահատվածում	0.97***
Դետերմինացիայի գործակից	0.80
Ընտրանք (դիտարկումների թիվ)	Ժամանակային ընտրանք՝ 1993-2020 թթ., 27 տարի, տարածական ընտրանք՝ 77, (1809)

Ընդհանուր արդյունքները վկայում են, որ արտոնագրային հայտերի թիվը դրականորեն է ազդում ապրանքների արտահանման վրա, սակայն ազդեցության ուժգնությունը թույլ է:

⁶ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

հնչպես և ակնկալվում էր, այլ հավասար պայմաններում, իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունը բացասական է: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս ազդեցությունը, տնտեսական առումով, նույնպես այնքան էլ ուժեղ չէ: Ազդեցության մեծությունը կարող է տարբեր լինել զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների համար: Ժամանակի ընթացքում ապրանքների ավելացված արժեքն աճում է, բացի այդ, զարգացած երկրներն արտադրում և արտահանում են բարձր ավելացված արժեքով ապրանքներ, որոնց գնային առածգականությունն այնքան էլ բարձր չէ, հետևաբար՝ իրական արդյունավետ փոխարժեքի ազդեցությունը նվազում է: Նախնական ակնկալիքներին համապատասխան՝ ՕՈԽՆ-ները դրական ազդեցություն ունեն արտահանման վրա, և այդ ազդեցությունը, այլ հավասար պայմաններում, մի փոքր ավելի ուժեղ է:

Բացի պանելային տվյալներով վերլուծությունից, կիրառվել է նաև Գրենջերի պատճառականության թեստը՝ արտահանման և ինովացիայի միջև պատճառահետևանքային կապը հայտնաբերելու համար, որի արդյունքները վկայում են, որ արտոնագրերն են հանգեցնում արտահանմանը, այլ ոչ՝ հակառակը (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Գրենջերի պատճառականության թեստի արդյունքները⁷

Model 1: $Exp1 \sim Lags(Exp1, 1:12)g + Lags(pat1, 1:12)$			
Model 2: $Exp1 \sim Lags(Exp1, 1:12)$			
Res. Degrees of freedom	Degrees of freedom	F	Pr(F)
1. 1722			
1. 1734	-12	1.7677	0.048

Հեղինակի կողմից կատարված էմպիրիկ վերլուծությունները ինովացիայի (արտոնագրային հայտերի քանակի) և միջազգային մրցունակության (ապրանքների արտահանման) միջև դրական կապի առկայության բավարար ապացույցներ են: Հետևաբար՝ արտահանման խթանման քաղաքականություն վարող երկրները պետք է դա զուգակցեն նաև ինովացիաները խթանելու քաղաքականության հետ:

Փորձելով վերլուծել ՀՀ ձեռնարկությունների շրջանում ինովացիոն գործունեության ակտիվությունը՝ իրականացվել է ձեռնարկությունների ինովացիոն գործունեության, չափերի և վաճառքի աշխարհագրական շուկայի միջև փոխառնչությունների գնահատում: Այսպես՝ ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 1700 ձեռնարկության տվյալների հիման վրա կատարված ոչ պարամետրական Wilcoxon Rank Sum թեստի գնահատականների արդյունքում բացահայտվել է այդ կազմակերպությունների չափի և ինովացիոն գործունեության միջև թույլ կապը, մասնավորապես՝ կազմակերպության չափերով պայմանավորված՝ ինովացիոն գործունեության տարբերությունը վիճակագրորեն նշանակալի չէ, այսինքն՝ կազմակերպության չափը նշանակալիորեն սահմանափակող գործոն չէ:

Տնտեսական գործունեության դասակարգման (NACE խմբեր) տարբեր խմբերի տվյալների հիման վրա ANOVA մոդելի միջոցով գնահատվել են ինովացիոն գործունեության ակտիվության և ձեռնարկության ոլորտի միջև փոխառնչությունները (աղյուսակ 4): Ըստ կատարված գնահատումների՝ բացահայտվել է, որ ինովացիա կատարելու տեսանկյունից գործունեության ոլորտը նշանակալի է: Տնտեսության որոշ ոլորտների ձեռնարկություններ ավելի հակված են ինովացիա կատարելու քան մյուսները: Հայաստանյան ինովացիոն

⁷ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

ձեռնարկությունների թիվն առավել մեծ է M՝ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն և C՝ մշակող արդյունաբերություն խմբերում:

Աղյուսակ 4. Ինովացիոն գործունեության ակտիվության և ձեռնարկության ոլորտի միջև փոխառնչության գնահատումը (ANOVA)⁸

	Df	Sum sq	Mean sq	F value	p-value
N	6	65.4	10.9	4.557	0.00414
Residuals	21	50.23	2.392		

Միկրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապը բացահայտելու նպատակով կիրառվել է Chi-square թեստ՝ ձեռնարկությունների ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական շուկայի միջև կապը բացահայտելու համար: Կատարված գնահատման արդյունքում բացահայտվել է, որ կա վիճակագրորեն նշանակալի փոխառնչություն վաճառքի աշխարհագրական շուկայի և ինովացիոն գործունեության միջև:

Աղյուսակ 5. Միկրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության փոխառնչության գնահատումը, (Chi-square թեստի և ակնկալվող արժեքները)⁹

Ինովացիայի առկայությունը կամ բացակայությունը	Վաճառքի աշխարհագրական շուկաներ			
	Տեղական/տարածքային մակարդակով Հայաստանում	Ազգային մակարդակով Հայաստանի այլ մարզերում	Եվրոպական միության կամ ասոցացված երկրներում	Այլ երկրներում
Ինովացիոն ձեռնարկություններ	180.07 (15.64)	37.98 (6.75)	7.24 (106.43)	12.69 (6.82)
Ոչ ինովացիոն ձեռնարկություններ	1734.92 (1.62)	366.01 (0.70)	69.75 (11.05)	122.30 (0.71)

Աղյուսակ 6-ից երևում է, որ χ^2 -ի ամենամեծ արժեքը՝ 106.43-ը, գտնվում է ԵՄ կամ ասոցացված երկրներ արտահանման և ինովացիոն ձեռնարկություններ վանդակում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դիտարկված դեպքերի թիվը շատ ավելի մեծ է եղել, քան սպասվում էր (դիտված=35, ակնկալվող=7.24): Սա նշանակում է, որ ԵՄ արտահանող ձեռնարկությունների մեջ ինովացիաներ կատարած ձեռնարկությունների թիվը զգալիորեն ավելի մեծ է, քան սպասվում էր, եթե ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական շուկաների միջև կապ չլիներ:

Ինչպես արդեն նշվել է, էմպիրիկ ուսումնասիրություններում արտահանումն օգտագործվում է որպես միջազգային մրցունակության մոտարկում, քանի որ այն արտացոլում է միջազգային շուկայում ապրանքներ արտադրելու և վաճառելու երկրի կարողությունը: Հետևաբար՝ հայաստանյան ձեռնարկությունների մակարդակի տվյալների

⁸ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

⁹ Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ:

հիման վրա կատարված տվյալ ուսումնասիրությունը գործնականում ապացուցում է միկրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության կապը:

Ատենախոսությունն ամփոփվում է **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնով, որտեղ արտացոլվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

1. Մակրոմակարդակում կատարած գնահատման արդյունքները հավաստում են, որ առկա է դրական կապ արտահանման և արտոնագրային հայտերի թվի միջև: Բացի պանելային ռեգրեսիոն մոդելով կապի հիմնավորումից, կատարվել է նաև պատճառահետևանքային կապի ստուգում, արդյունքում՝ բացահայտվել է, որ արտոնագրային հայտերի թվի աճն է հանգեցնում արտահանման ավելացման, այլ ոչ թե հակառակը, թեև ազդեցության ուժգնությունը թույլ է:

2. Կատարված գնահատումները հավաստում են, որ ձեռնարկության չափի և ինովացիոն գործունեության միջև փոխառնչությունը նշանակալի չէ, ինչը բացատրվում է փոքր ընկերությունների ավելի մեծ ճկունությամբ և, անկախ ընկերության չափից, որոշ ոլորտների ձեռնարկությունների՝ ինովացիա կատարելու ավելի մեծ հակվածությամբ: ՀՀ-ում առավել շատ ինովացիա կատարել են Մ՝ մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն և Ը՝ մշակող արդյունաբերություն խմբերում:

3. Հետազոտության արդյունքում բացահայտվել է դրական փոխառնչություն վաճառքի աշխարհագրական վայրի և ինովացիոն գործունեության միջև: Մասնավորապես՝ այն ձեռնարկությունները, որոնք իրենց արտադրանքը նաև արտահանել են, ավելի շատ ինովացիա են կատարել, քան այն ձեռնարկությունները, որոնք իրենց արտադրանքը վաճառել են բացառապես տեղական շուկայում: Ընդ որում, առավել շատ ինովացիա կատարել են դեպի ԵՄ և ասոցացված երկրներ արտահանող ձեռնարկությունները:

4. Համեմատած ՀՀ արտահանման այլ ուղղությունների, օրինակ՝ ԱՄՀ երկրների շուկաների հետ, ԵՄ և ասոցացված երկրների շուկաներում մրցակցությունը շատ ավելի բարձր է: Հետևաբար՝ կարող ենք պնդել նաև, որ առավել մրցունակ արտադրանք թողարկողներն ավելի շատ ինովացիաներ են կատարել: Թե՛ միկրոմակարդակում, թե՛ մակրոմակարդակում կատարված գնահատումները բավարար ապացույցներ են էմպիրիկ մակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապի հիմնավորման համար:

5. Ազգային ինովացիոն համակարգը, անկախ զարգացման և բարդության աստիճանից, հենվում է կրթական, գիտական, պետական և գործարար հենասյուների վրա: Կրթությանն ուղղվող պետական հատկացումները Հայաստանում բավականին փոքր են և տատանվում են ՀՆԱ 2.5-2.8%-ի շրջանակներում: Դրան համարժեք՝ Հայաստանում բավականին ցածր է կրթության որակը:

6. Կատարված փորձագիտական հարցումների արդյունքում պարզվել է, որ այն գործոնները, որոնք հանգեցրել են կրթության որակի ցածր լինելուն՝ հիմնականում կապված են առարկայական ծրագրերի, ուսուցիչների և աշակերտների մոտիվացիայի հետ: Առարկայական ծրագրերի հետ կապված կարևոր է նշել, որ, նոր չափորոշիչներին համապատասխան, ներդրվում են նոր առարկայական ծրագրեր: Մյուս գործոնների հետ կապված էլ կարևոր է ընդգծել, որ, ուսումնասիրությունների համաձայն, ուսուցչի մոտիվացիան դրական է ազդում աշակերտի առաջադիմության վրա: Իսկ ուսուցչի մոտիվացիայի վրա էլ ազդում են բազմաթիվ գործոններ, և աշխատավարձն այդ գործոններից մեկն է միայն, սակայն լավագույն թեկնածուներին ներգրավելու և լավագույն ուսուցիչներին համակարգում պահելու տեսանկյունից՝ դա ամենաէական գործոնն է: ԿԿՄՍ նախարարությունը ներդրել է ուսուցիչների կամավոր ատեստավորման համակարգ, որի արդյունքում նախատեսվում է աշխատավարձի որոշակի բարձրացում, սակայն դա բավական չէ, քանի դեռ բազային աշխատավարձի էական բարձրացում չի կատարվել: Տարիներ շարունակ նվազագույն

սպառողական զամբյուրին համարժեք՝ ցածր աշխատավարձն է նաև հանգեցրել ուսուցչի հեղինակության անկման, որն էլ իր հերթին է բացասաբար ազդել կրթության որակի վրա:

7. Բացի ընդհանուր կրթության որակից՝ ինովացիոն գործունեության տեսանկյունից կարևորվում է հետադարձական կրթության ընդհանուր շրջանավարտների մեջ գիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության և մաթեմատիկայի գծով շրջանավարտների տեսակարար կշիռը: Հայաստանն այս ցուցանիշով զբաղեցնում է 88-րդ հորիզոնականը: Թեև ցուցանիշը նախորդ տարիների համեմատությամբ բարելավվել է, սակայն դեռ ցածր է մնում, ինչը նշանակում է, որ STEM կրթական ծրագրերի վերաբերյալ քաղաքականության արդյունավետության մշտադիտարկում պետք է կատարել, կրթական ծրագրերի փոփոխությունից բացի պետք է ներառել նաև խրախուսման միջոցներ, մասնավորապես՝ ավելացնել այդ մասնագիտությունների գծով պետական կրթաթոշակով սովորողների թիվը:

8. Ինովացիոն գործունեության տեսանկյունից առանցքային է գիտության դերը: Սակայն անկախ Հայաստանի գոյության ողջ ընթացքում գիտության ֆինանսավորումը շատ ցածր է եղել և տատանվել է ՀՆԱ 0.2%-ի շրջանակներում: Եթե կրթությանն ուղղվող միջոցները զիջում են ընդունված միջինին շուրջ 2 անգամ, ապա Հայաստանի համախառն ՀուՄ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը զիջում է միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրների միջինին 8 անգամ, աշխարհի միջինին՝ 9 անգամ: Համախառն ՀուՄ ծախսերի մեջ մտնում են նաև մասնավոր հատվածի կողմից կատարվող ՀուՄ ծախսերը, սակայն Հայաստանում դրանք ընդհանրապես չեն հաշվարկվում, ինչը գրկում է ոչ միայն այլ երկրների հետ համեմատման, այլև Հարկային օրենսգրքով ՀուՄ աշխատանքներին տրվող որոշ արտոնությունների արդյունավետության գնահատման հնարավորությունից:

9. Ինովացիոն գործունեության հետ ուղղակիորեն առնչվող գիտության ոլորտի մեկ այլ ցուցանիշ է մեկ միլիոն բնակչի հաշվով հետազոտողների թիվը: Այն դեպքում, երբ Խորհրդային Միության տարիներին մեկ միլիոն բնակչին բաժին ընկնող հետազոտողների թվով Հայաստանը զիջում էր միայն Ռուսաստանին, այժմ տարածաշրջանի և ԵԱՏՄ երկրների համեմատությամբ առաջ է միայն Ղազախստանից: Հայաստանում հետազոտողի աշխատանքը գրավիչ չէ՝ հաշվի առնելով աշխատանքի բարդությունը և դրան ոչ համարժեք ցածր աշխատավարձը, որի այլընտրանքները շատ ավելի քիչ տարիների կրթությամբ ու աշխատանքի բարդությամբ հնարավոր է գտնել նույնիսկ ՀՀ աշխատաշուկայում:

10. Ինովացիոն գործունեության տեսանկյունից անչափ կարևոր է մասնավոր ֆինանսավորման հնարավորությունների, ինչպես նաև ինովացիոն գործունեությանը նպաստող ֆինանսական և այլ ենթակառուցվածքների առկայությունը: ՀՀ-ում առկա են ինովացիոն գործունեությանը և ստարտափներին աջակցող գրեթե բոլոր տարրերը (ինկուբատորներ, արքելերատորներ, հրեշտակ ներդրողների ակումբներ, զարգացման ինստիտուտներ, վենչուրային հիմնադրամներ), սակայն ֆինանսավորման առումով առավել մեծ է վենչուրային հիմնադրամների դերը:

11. Հայաստանում ինովացիոն միջավայրն, ընդհանուր առմամբ, բարենպաստ է օրենսդրության և հարկային արտոնությունների առումով, մինչդեռ օրենքների կիրարկման, կապիտալի շուկայի խորության և մարդկային կապիտալի զարգացման ուղղությամբ դեռևս անելիքները շատ են: Հետևապես՝ պետության գործառույթն առավելապես պետք է լինի նշված ցուցանիշների լավարկումը, ընդհանուր ենթակառուցվածքների ստեղծումը և ոլորտի համար մրցակցային միջավայրի ապահովումը: Կարծում ենք՝ նման պայմաններում շուկայական մեխանիզմները կհանգեցնեն անհրաժեշտ ծավալով և թվով ֆոնդերի ստեղծմանը՝ առանց նույնիսկ ֆոնդերում պետության ուղղակի ներդրումային մասնակցության:

12. Ինովացիոն գործունեությունը խթանելու պետության ուղղակի գործառույթը պետք է լինի ոչ թե մասնավոր հատվածի գործառույթներ իրականացնելը, այն է՝ ստարտափներում

ներդրումներ կատարելը՝ վեճուրային ֆոնդում մասնակցության միջոցով, այլ այնպիսի օրենսդրական միջավայրի, հարկային և ֆինանսական խթանների ապահովումը, որոնք ինովացիա կատարելը մասնավորի համար կդարձնեն շահավետ, իսկ արդյունքում դրանից կօգտվի հասարակությունը, և կշահի ողջ տնտեսությունը:

13. Այլ հավասար պայմաններում, եթե նույնիսկ պետությունն ապահովի բարենպաստ ինովացիոն միջավայր, միայն դա բավարար չէ ձեռնարկությունների շրջանում պահանջվող ինովացիոն ակտիվություն ապահովելու համար, քանի որ ինովացիոն համակարգը կարող է աշխատել միայն բոլոր հենասյուների արդյունավետ գործունեության և փոխազդեցության պայմաններում: Պետությունը միայն բարենպաստ օրենսդրական և հարկային միջավայր ստեղծելու, ֆինանսական խթաններ տրամադրելու միջոցով չի կարող հասնել շոշափելի արդյունքների, անհրաժեշտ է նաև պետության ակտիվ քաղաքականությունը ինովացիոն համակարգի մյուս հիմնասյուների՝ կրթության և գիտության բարելավման ուղղությամբ՝ շեշտը դնելով հարաբերական ցուցանիշների բարձրացման վրա:

14. Պետության ինովացիոն ռազմավարությամբ նախատեսված ծրագրերն, ընդհանուր առմամբ, իրականացվել են, սակայն այդպես էլ չի հաջողվել հասնել տեսլականով սահմանված՝ Հայաստանը գլոբալ տեխնոլոգիական ՀուՄ կենտրոն դարձնելու նպատակին: Բացի այդ, նշված ռազմավարությունը կորցրել է իր արդիականությունը՝ ընդհանուր առմամբ կատարելով իր մեկնարկային գործառույթը:

Այսպիսով՝ ելնելով բացահայտված խնդիրներից և կատարած եզրակացություններից, առաջարկվում է.

1. Մշակել նոր ռազմավարություն, որը կհամապատասխանի Հայաստանի ներկայիս ինովացիոն համակարգին, հաշվի կառնի այս տարիների ընթացքում արտաքին աշխարհի միտումների փոփոխությունը և կներառի ինովացիոն համակարգի տարբեր օղակների միջև փոխգործակցությունն ապահովող ծրագրեր: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ռազմավարության մեջ հստակ թիրախներ և ժամկետներ սահմանել, մշակել դրանց հասնելու ճանապարհային քարտեզը և այդ ճանապարհին հատկացվող բոլոր ռեսուրսները: Ինչպես նաև անհրաժեշտ է վերանայել Օրենքը՝ բարձրացնելով վերջինիս հասցեականությունը:

2. ՀՀ ձեռնարկությունների շրջանում իրականացնել ինովացիոն գործունեության ուսումնասիրություն: Մինչ նոր ռազմավարության մշակումը՝ անհրաժեշտ է կատարել ինովացիոն գործունեությունը սահմանափակող խնդիրների ճիշտ ախտորոշում թե՛ մակրոմակարդակում, թե՛ միկրոմակարդակում: Սույն հետազոտության ընթացքում մանրամասն ներկայացվել է ՀՀ ԱԻՀ-ը, առկա խնդիրները, իրականացվել է ԳԻՀ-ի բոլոր տարիների զեկույցների վերլուծություն, որոնց հիման վրա բացահայտվել են ինովացիոն գործունեությանը խանգարող մակրոմակարդակի բոլոր խնդիրները: Իսկ միկրոմակարդակում ձեռնարկությունների ինովացիոն գործունեությունը անմիջականորեն սահմանափակող խնդիրները բացահայտելու համար անհրաժեշտ է 2017 թ. պիլոտային հետազոտությանը համանման հարցումներ անցկացնել: Միայն ձեռնարկությունների ինովացիոն գործունեությունը խանգարող ներկա գործոնները վեր հանելով և մակրոմակարդակի առկա խնդիրները հաշվի առնելով է հնարավոր մշակել արդյունավետ ինովացիոն ռազմավարություն և ինովացիոն գործունեությունը խթանող թիրախային գործիքներ:

3. Մասնավոր հատվածի ՀուՄ աշխատանքների վերաբերյալ վարել պատշաճ վիճակագրություն՝ պարբերաբար հրապարակելով կատարած ՀուՄ աշխատանքների ծավալը ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձին տեսակների մասով: Հրապարակել նաև մասնավոր ՀուՄ աշխատանքներում ներգրավված անձնակազմի թիվը և կազմը, ստացած հարկային արտոնությունները, տարբեր աղբյուրներից ստացած դրամաշնորհները,

արդյունքում գրանցած արտոնագրերը ինչպես տեղական և PCT ընթացակարգերով, այնպես էլ ԱՄՆ-ում գրանցված: Նման վիճակագրություն ունենալն ինքնանպատակ չէ. դա, նախևառաջ, միջոց է՝ մշակելու արդյունավետ խթանող քաղաքականություն և պարբերաբար չափելու կիրառած գործիքների արդյունավետությունը (օրինակ՝ առածգականության գործակիցների չափման միջոցով), ապա՝ կատարելու միջազգային համեմատություններ:

4. Բարելավել մարդկային կապիտալի «պաշարը», որի հստակ ուղիներից մեկը դպրոցական կրթության որակի բարձրացումն է: Աներկբա է, որ կրթության արդյունքները պայմանավորված են ուսուցիչների որակով: Երկարաժամկետում կրթական համակարգ բարձր կարողություններով օժտված մանկավարժների ներգրավման խթանը կարող է լինել բազային աշխատավարձի էական բարձրացումը, որը կուղեկցվի աշխատանքային փորձով և ատեստավորման արդյունքներով պայմանավորված հավելումներով:

5. Տրամադրել ինովացիոն վաուչերներ տնտեսության բոլոր ոլորտների ձեռնարկություններին, այլ ոչ թե միայն ՏՏ ոլորտին՝ նոր արտադրանքի կամ գործընթացի իրագործելիության ուսումնասիրության, նոր բիզնես մոդելի մշակման, նոր ծառայությունների մատուցման համար: Վաուչերների նպատակը ոչ միայն ինովացիոն գործունեության զարգացումն է, այլև բիզնեսի և գիտելիքի արտաքին աղբյուրների՝ համալսարանների և հետազոտական կենտրոնների միջև կապի ձևավորումը: Ուստի վաուչերներ կարող են տրամադրվել ոչ միայն վերոնշյալ գործունեության տեսակների, այլև համատեղ արտոնագրեր մշակելու համար:

6. Կիրառել հարկային գերնվազեցում ՀուՄ ծախսերի համար, այսինքն՝ թույլ տալ հարկվող եկամտից կատարել նվազեցում ոչ թե ՀուՄ ծախսերի 100%-ի չափով, այլ ավելի բարձր գործակցով: Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ-ում համախառն ՀուՄ ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը 8-9 անգամ գիջում է ընդունելի միջիններին, ուստի նման հարկային նվազեցումը ևս որոշակիորեն կխթանի մասնավորին՝ ակտիվություն ցուցաբերելու ՀուՄ աշխատանքներում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Tadevosyan, Z., Tadevosyan, R. (2017). The Study of Innovation Policy Instruments in the Base of International Experience. International Scientific Symposium Economy of Eastern Croatia – Vision and Growth, 6th Conference, pp. 266-274 (Indexed in Web of Science)
2. Ахвердян, Д., Тадевосян, Р. (2020). Инвестиции в человеческий капитал и качество образования в Армении. Традиции и новации в профессиональной подготовке и деятельности педагога, pp. 28-34, <https://elibrary.ru/item.asp?id=43983031>
3. Tadevosyan, R. (2021). Core determinants of companies innovation performance: case for Armenia. Marketing and Management of Innovations, 3, pp. 108-116, <https://doi.org/10.21272/mmi.2021.3-09> (Indexed in Web of Science)
4. Tadevosyan, R. (2023). Innovations and international competitiveness: Country-level evidence. Economics and Sociology, 16(3), 248-260. doi:10.14254/2071-789X.2023/16-3/13 (Indexed in Scopus and Web of Science)
5. Tadevosyan, R. (2023). A Comprehensive Analysis of Armenia's Innovation Input and Output. Messenger of ASUE, 3(75), 83-99. DOI: 10.52174/1829-0280_2023.3-83

Тадевосян Рузанна Бариджановна
ВЛИЯНИЕ ИННОВАЦИЙ НА МЕЖДУНАРОДНУЮ КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ
ЭКОНОМИКИ (НА ПРИМЕРЕ РА)

Диссертация представления на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 00.06 - «Международная экономика».

РЕЗЮМЕ

Проблемы повышения международной конкурентоспособности и активизации инновационной деятельности всегда находились в центре внимания экономистов и политиков. В нынешних условиях углубления глобализации и обострения конкуренции указанные проблемы более чем актуальны как во всем мире, так и в Армении. С целью повышения международной конкурентоспособности страны разрабатывают свою экономическую политику таким образом, чтобы иметь возможность напрямую влиять на факторы, связанные с повышением международной конкурентоспособности. С целью повышения международной конкурентоспособности страны разрабатывают свою экономическую политику таким образом, чтобы иметь возможность напрямую влиять на факторы, связанные с повышением международной конкурентоспособности. Существует общепринятое мнение о роли инноваций, согласно которому они рассматриваются как движущая сила повышения эффективности экономики.

Очень часто инновации отождествляются с технологиями, в основном с информационными технологиями, но инновации – это более широкое понятие, охватывающее не только ИТ или ИКТ, но и все отрасли экономики. Как во всем мире, так и в Армении на протяжении многих лет преобладало технологическое понимание инноваций, в результате чего государственная политика была разработана в основном с целью поддержки деятельности в сфере ИТ. Однако не только в ИТ, но и во всех секторах экономики, в том числе даже в сельском хозяйстве, внедрение инноваций может значительно повысить эффективность экономики, что в конечном итоге приведет к повышению международной конкурентоспособности. Исходя из вышесказанного, придается важность разработке и принятию новой инновационной стратегии в Армении, на этот раз с акцентом на стимулирование инновационной деятельности не только в ИТ, но и во всех сферах экономики.

Оценка взаимосвязи инноваций и международной конкурентоспособности, диагностика ограничений инновационной деятельности на макроуровне и разработка мер, направленных на повышение эффективности соответствующей политики с целью стимулирования инновационной деятельности, обусловили актуальность данной диссертации и своевременность исследования.

Цель и задачи исследования: Целью исследования является оценка взаимосвязи между международной конкурентоспособностью экономики РА и инновациями и выявление путей улучшения инновационной политики в РА. Исходя из поставленной цели, в диссертации были поставлены и решены следующие задачи:

- изучить теоретические подходы и наиболее важные эмпирические исследования, касающиеся измерения международной конкурентоспособности, международного опыта инновационной политики, инструментария и механизмов реализации политики;

- изучить теоретические подходы к измерению различных типов инноваций, а также рассмотреть важные эмпирические исследования на микроуровне и макроуровне с точки зрения испытательного анализа;
- изучить институциональные рамки инновационной системы РА, изучив законодательное поле, связанное с инновационной деятельностью, и механизмы, применяемые до сих пор;
- изучить инновационные инфраструктуры РА, факторы, способствующие и препятствующие их функционированию, состояние человеческого капитала и глубинные проблемы его развития;
- проанализировать инновационные показатели предприятий РА и оценить взаимосвязь между их инновационной деятельностью и размером предприятия, а также сферой деятельности;
- оценить взаимосвязи между инновационной деятельностью предприятия и географическим направлением продаж;
- оценить взаимосвязь между инновациями и международной конкурентоспособностью на макроуровне;
- подвергнуть всестороннему анализу инновационные ресурсы РА и результаты их жизнедеятельности.

Объект и предмет исследования. Объектом исследования является взаимосвязь между международной конкурентоспособностью экономики Армении и инновационной деятельностью. Предметом исследования является оценка влияния инноваций на международную конкурентоспособность Армении.

Научная новизна диссертации: На основе исследования, проведенного в рамках диссертации, был получен ряд результатов, имеющих теоретическое, методологическое и практическое значение, из которых научную новизну, являются:

- В результате кластерного анализа 126 стран была выявлена и обоснована сильная положительная взаимосвязь между эффективностью системы образования стран и общей инновационной эффективностью. По результатам анализа Армения вошла в число стран со средним уровнем эффективности образования и инновационной эффективности.
- В результате регрессионной оценки, проведенной на основе панельных макроэкономических данных 67 стран с использованием модели оценки влияния макроэкономических факторов на международную конкурентоспособность, выявлена существующая положительная взаимосвязь между количеством заявок на патенты и экспортом, но со слабой степенью воздействия. Обосновано положительное влияние роста числа патентов на экспорт;
- Оценки, проведенные с использованием непараметрического метода Wilcoxon Rank Sum на основе данных более чем 1700 предприятий, осуществляющих деятельность в РА, подтвердили, что размер организации не является фактором, существенно ограничивающим инновационную деятельность последней.
- С использованием модели ANOVA были оценены различия в активности инновационной деятельности в соответствии с различными группами классификации экономической деятельности (группы NACE) и выявлена значимость сферы деятельности с точки зрения внедрения инноваций.
- На основе микроданных предприятий РА с использованием теста Chi-Square была проведена оценка взаимосвязи между их экспортными рынками и инновационной деятельностью. Обнаружено, что предприятия РА, ориентированные на рынки ЕС и ассоциированных стран, чаще применяют инновации.

RUZANNA BARIJAN TADEVOSYAN
THE IMPACT OF INNOVATIONS ON THE INTERNATIONAL COMPETITIVENESS OF THE ECONOMY (BY THE EXAMPLE OF RA)

Abstract of the thesis for receiving the scientific degree of PhD of economic sciences in the field 00.06 - "International Economics".

ABSTRACT

The issues of increasing international competitiveness and activating innovative activities have always been at the center of the attention of economists and policymakers. In the contemporary era of deepening globalization and escalating competition, the aforementioned issues hold significant relevance, both on a global scale and within the context of Armenia. To enhance international competitiveness, countries shape their economic policies in such a way that they can directly influence the factors related to increasing international competitiveness. There is a widely accepted consensus that underscores the pivotal role of innovation as a driving force behind enhancing economic efficiency.

Innovation is often equated with technology, especially information technology, but innovation is a broader concept encompassing not only IT or ICT but all sectors of the economy. As in the whole world, in Armenia, the technological interpretation of innovation has prevailed for years, as a result of which state policy has been developed to support the activities of the IT sector. However, the application of innovations extends beyond the realm of IT to encompass all sectors of the economy, including agriculture. Embracing innovation across diverse sectors can substantially enhance economic efficiency, ultimately bolstering international competitiveness. Based on the above, it is imperative to formulate and implement a new innovation strategy in the Republic of Armenia. This strategy should prioritize the promotion of innovative activities not solely within the IT sector, but in all sectors of the economy.

The assessment of the association of innovations and international competitiveness, the identification of macro-level constraints on innovative activities, and the formulation of measures to enhance the efficacy of the relevant policy to promote innovative activity have determined the relevance of this dissertation and the urgency of the research.

The aims and objectives of the research

The research aims to evaluate the relationship between the international competitiveness of the RA economy and innovations with a focus on identifying the ways to improve the innovation policy in RA. Based on the defined goal, the following issues have been proposed and solved in the dissertation:

- Explore theoretical frameworks and key empirical research concerning the measurement of international competitiveness, as well as examine international experiences in innovation policy, along with the tools and mechanisms for policy implementation.
- Investigate theoretical approaches for measuring various types of innovation, alongside the critical analysis of noteworthy empirical studies at both micro and macro levels.
- Examine the institutional framework of Armenia's innovation system through an analysis of the legislation related to innovation activities and the mechanisms used so far.
- Investigate the innovative infrastructures in Armenia, analyze the factors that contribute to or hinder their activity, assess the state of human capital, and delve into the underlying issues concerning its development.

- Examine the innovative performance of Armenian enterprises, and assess the relationship between their innovative activities, the size of the enterprise, and the sector of operation.
- Examine the relationship between the innovative activity of the enterprise and the geographical direction of sales.
- Assess the relationship between innovation and international competitiveness at the macro level.
- comprehensively analyze the innovation input and output of Armenia.

The scientific novelty of the thesis is expressed in the following

- A cluster analysis of 126 countries revealed and substantiated a strong positive relationship between the effectiveness of the country's education system and overall innovation performance. According to the results of the analysis, Armenia was classified among the countries with an average level of education efficiency and innovation performance.
- As a result of the regression evaluation performed on the basis of the panel data of 67 countries with the model for assessing the impact of macroeconomic factors on international competitiveness, the positive relationship between the number of patent applications and exports was revealed, albeit with a weak influence. The positive effect of patent growth on exports has been substantiated.
- Based on the data of more than 1,700 enterprises operating in RA, the evaluations have been made by the non-parametric Wilcoxon Rank Sum method proving that the size of the organization is not a significant limiting factor in its innovation activity.
- The ANOVA model has been employed to evaluate variances in innovative activity according to the classification of economic activities groups (NACE groups), revealing the significance of industry sectors in terms of innovation.
- Utilizing microdata from Armenian enterprises, the relationship between their export markets and innovative activities has been assessed using the Chi-Square test. The analysis has unveiled that Armenian enterprises oriented towards the markets of the EU and associated countries demonstrate a higher frequency of innovation.



